

ղրկուի Եգիպտոս, իբրև բժիշկ Թուրքի շոգե- նաւին, որ կայսերական ներկայացուցիչ Մուխ- թար պէյը հոն կը տանէր:

1860 Յունուար 2ին կ'երթայ Թունուզ, ընկերակցութեամբ Հայրէրտին Փաշայի, որ Սա- տրք Մուհամմետ Փաշայի իշխանական հրովար- տակը կը տանէր: Կոյն տարին Յունիս 30ին՝ Սուրիոյ յեղափոխութեանց ժամանակ, մեծա- նուն ֆուատ Փաշայի հետ կ'երթայ Պէյրութ դարձեալ Թուրքի շոգենաւով:

Ֆուատ Փաշա բարձրագոյն հրամանաւ եւ լիազօր իշխանութեամբ կը զրկուէր հոն խոռ- վութեանց առաջքն առնելու. ֆուատ Փաշայի կ'ընկերանային նաև ուրիշ երկու երեւելի Հայ, Ապրօ Սահակ էֆէնտին եւ ողբացեալն Տրքթ. Կահապետ Ռուսինեան, որ ֆուատ Փաշայի ան- ձնական բժիշկն էր<sup>1</sup>:

Պէյրութէն վերադարձին, բաւական ատեն կայսերական այլեայլ մարտանաւերու մէջ ի- բրև բժշկապետ ծառայելով, 1860 Մայիս 3ին, կ'ընտրուի անդամ<sup>2</sup> և Պոլսոյ կայսերական բժշկական ընկերութեան, որ արդէն եօթը նշա- նաւոր Հայ իր մէջն ունէր, այսինքն, Տրքթ. Տա- վուտ, Սերվիշէն, Սինապեան, Բորովիչ, Մողեան, Ռուսինեան եւ Բարունակ պէյ:

Այս ընկերութեան մասնակցելով, Գա- բրիէլ Սեւեան հեղինակ կը հանդիսանայ գի- տական ընտիր աշխատութիւններու, որք հրա- տարակուած են և Պոլսոյ Gazette Médicale d'Orient ի մէջ:

Ասոնց գլխաւորն է, ֆէթիէի պանդխտու- թեան ժամանակ, նաւաստիներուն վրայ տես- նուած բազմադիմի հիւանդութեանց մասին պատրաստած ընդարձակ գրութիւնը, „Les ma- ladies de Féthié“ անուն<sup>3</sup>, որ այն ատենն իբրև նորութիւն կայս. բժշկական ընկերութենէն մե- ծապէս գնահատուած, այժմ իսկ զուրկ չէ Հա- հեկանութենէ:

1862ին<sup>4</sup>, Տրքթ. Սեւեան սկսած է պաշ- տօնավարել և Պոլսոյ ծովային զինուորական հիւանդանոցը, որուն բժշկական ընդհանուր գործառնութեանց վրայ պատրաստած է ընդար-

ձակ եւ հմտալից վիճակագրութիւններ, զորս 1862—66', կը ներկայացընէր ամէն տարի բժշկական ընկերութեան:

Արդիւնք երկարատեւ տքնութեանց, այս վիճակագրութիւնները, իրենց տեսակին մէջ առաջինը և Պոլսոյ համար, հիանալի կերպով կը յայտնեն Տրքթ. Սեւեանի բժշկական երկայ- նըմբեր հետազօտութիւնները. մանրակրկիտ դի- տողութիւնները, եւ հոգածու խնամքն որով կը դարմանէր իւր զինուոր հիւանդները. ինչ լաւ դասեր կը պարունակեն այս վիճակագրութիւն- ները, գիտական ինչ ընտիր փորձեր կ'աւանդեն անոնք, եւ ինչ մեծ պատիւ են Սեւեանի կարո- ղութեան եւ բժշկական տաղանդին:

Այս վիճակագրութիւններէն զատ Սեւեան ունի դեռ շատ գրութիւններ, որոնց մէջ մաս- նաւորապէս գովասանուած է ժամանակին „Les Médecins Militaires en Turquie“ անուն ընտիր գործը, որ Թուրքիոյ զինուորական բժիշկ- ներուն վիճակը կը նկարագրէ եւ լոյս տեսած է և Պոլսոյ բժշկական թերթին մէջ<sup>2</sup>:

1865 Հոկտեմբեր 18ին, քոլէրայի մեծ համաճարակէն վերջը, ի վարձ իւր անձանձիր եւ արգիւնաւոր աշխատութեանց Տրքթ. Սեւեան կը ստանայ 4<sup>րդ</sup> կարգի Մէճիսիէի պատուանշանը, Բարունակ Պէյի, Ասլանեանի եւ այլ օտարազգի բժիշկներու հետ<sup>3</sup>:

1871 Յունուար 6ին բարձրագոյն հրա- մանաւ ծովային բժշկական խորհուրդն հաստա- տուելով, Սեւեան ինքն ալ անդամ կ'որոշուի, եւ այս առթիւ, ղէջ տիտղոսով կը բարձրանայ Վերուայի այսինքն՝ գնդապետի (Colonel) աստի- ձանին:

Ծովային բժշկական խորհուրդին մէջ Տրքթ. Սեւեան պէյ անպիսի օգտակար գործե- րու հեղինակ կ'ըլլայ, որ 1872ին պատիւ կ'ու- նենայ նոյնին Փոխ-նախագահն ըլլալու:

1876 Յունիս 31ին՝ կարմիր Մահիկի (Croissant rouge) ընկերութեան Հիմնադիր Ժո- ղովին կը մասնակցի, ի դիմաց ծովային Կախա- րարութեան եւ կ'ունենայ հոն գործին ազդեցու- թիւն, ինչպէս կը պատմէր ինձ շատ անգամ Տրքթ. Սերվիշէն, որ քանիցս նախագահած էր այդ ընկերութեան:

<sup>1</sup> „Մուսթա“ 9րդ Տարի, Թիւ 438, 30 Յունիս 1860, եւ Թիւ 439, 7 Յունիս 1860:  
<sup>2</sup> „Gazette Médicale d'Orient“ Թիւ Յունիսի, 1861, էջ 43:  
<sup>3</sup> „Les maladies de Féthié“ Nr. Gazette Mé- dicale d'Orient Nr, 10 de Janvier et Nr. 11 de Février 1862 page 149—153 եւ 166—168,  
<sup>4</sup> „Gazette Médicale d'Orient“ Nr. 2 de mai 1862, page 21—24 et 78—81 եւ ԱՊ. Թիւ Mai 1863, page 26—29, 56—59, 116—121. 1864 page 152—156.

<sup>1</sup> „Gazette Médicale d'Orient“ 1865, page 9—12, 52—57, 118—121 եւ 1866 page 75—79.  
<sup>2</sup> „Gazette Médicale d'Orient“ 1864 Janvier էջ 145—149:  
<sup>3</sup> ԱՊ. 1866 էջ 96: